



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> սեպտեմբերի 2012թ. N: 243 - Ա ք. Գյումրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին նախատեսված <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված հատկացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի կողմից ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունների եզրակացությունները և ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 14 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

1.Ներքոհիշյալ քաղաքացիներին ցուցաբերել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Անուն, Ազգանուն	Հասցե	Գումարի չափը
Էմմա Զաքարյան	ք.Գյումրի,Մ. Խորենացի փողոց, շենք 4, բնակարան 39	20000/քսան հազար/դրամ
Գեղեցիկ Հակոբյան	ք.Գյումրի,Գարեգին Ա-ի փողոց, շենք 12, բնակարան 52	50000/հիսուն հազար/դրամ
Շուշանիկ Միքայելյան	գ. Սառնաղբյուր	30000/երեսուն հազար/դրամ
Մարիամ Հովհաննիսյան	ք.Գյումրի,Շիրակացի փողոց, շենք 29 բնակարան 7	25000/քսանհինգ հազար/դրամ
Զենֆերա Ալեքսանյան	ք.Գյումրի,Մ.Ավետիսյան փողոց, շենք 21, բնակարան 12	50000/հիսուն հազար/դրամ

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Հովհաննես Մամիկոնյանին՝ ապահովել վճարման կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

